# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 22-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ-Ի ՀՈՒԼԻՍԻ 08-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2019թ-ի հուլիսի 08-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2019թ-ի հուլիսի 08-ի թիվ 05 նիստի

1. Շահումյան համայնքի բյուջեի կատարման 2019թ-ի II եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Շահումյան համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը օտարելու մասին:
4. Շահումյան համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:
6. ,,Անհայտ,, քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 23-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2019Թ-Ի II ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Ընդունել ի գիտություն Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեի 6 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 24-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Շահումյան համայնքի 2019թ-ի բյուջեում 08.07.2019թ-ին կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

**Ընդամենը**- 71 696 700 /յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 71 696 700 /յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 0 / զրո / ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով

**Ընդամենը** - 85 614 600 /ութսունհինգ միլիոն վեց հարյուր տասնչորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 71 696 700 /յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 13 917 900 /տասներեք միլիոն ինը հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 25-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Տալ համաձայնություն Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդ վաճառքով օտարելուն: Օտարվում է հողամասեր 5 լոտով.

-Լոտ 1: Շահումյան համայնքի ,,Հայի գոմեր,, հանդամասում գտնվող 06-084-0355-0013 ծածկագրով 0.17891 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

-Լոտ 2: Շահումյան համայնքի ,,Տանձուտ,, հանդամասում գտնվող 06-084-0320-0031 ծածկագրով 0.3891 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

-Լոտ 3: Շահումյան համայնքի ,,Երկար թալա,, հանդամասում գտնվող 06-084-0318-0038 ծածկագրով 0.9181 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք, 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

-Լոտ 4: Շահումյան համայնքի ,,Երկար թալա,, հանդամասում գտնվող 06-084-0477-0033 ծածկագրով 0.6565 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք, 1 100 000 (մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

-Լոտ 5: Շահումյան համայնքի ,,Երկար թալա,, հանդամասում գտնվող 06-084-0477-0034 ծածկագրով 0.3811 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք, 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

2. Սահմանել լոտի աճուրդի մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել աճուրդի հայտարարության հրապարակային ծանուցումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 26-Ա

## ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ,,Հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին,, ՀՀ Կառավարության 2002թ-ի հոկտեմբերի 23-ի թիվ 656-Ն որոշումը՝ Շահումյան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ու Մ Է

Հաստատել Շահումյան համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2019թ-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հաշվի առնելով համայնքի մշակութային և հոգևոր արժեքների պահպանման և տարածման գործում մեծ ավանդ ներդնելու հանգամանքը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Ներքոնշյալ ՀՀ քաղաքացիներին շնորհել ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

1. Գուգարաց թեմի գերաշնորհ առաջնորդ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյան
2. Արամ Վասիլի Աղաբեկով - քանդակագործ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 28-Ա

,,ԱՆՀԱՅՏ,, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թ-ի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանով, «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման նպատակով, քանի որ դրանց նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Քանի որ սեփականատերերը նախկինում հրաժարվել են իրենց հողամասերից, երբևէ չեն օգտագործել և կատարել վճարումներ, ներկայում համարվում են ,,անհայտ,, հողամասեր, համաձայն կից ներկայացրած հավելվածի նշված հողամասերի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
2019 թվականի Հուլիսի 08-ի N 28-Ա որոշման

<<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | Ազգանուն | Անուն | Հողատեսքը | Ծածկագիրը | Չափը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մկրտչյան | Միխիթար | վարելահող | 06-084-316-013 | 0,3328 հա |
| 2 | Չիլինգարյան | Լյուդվիգ | վարելահող | 06-084-318-040 | 0,262հա |
| 3 | Հարոյան | Հրաչիկ | տնամերձ | 06-084-071-003 | 0,037հա |
| 4 | Մխիթարյան | Զավեն | խոտհարք | 06-084-312-006 | 0,915 հա |
| 5 | Մխիթարյան | Սամվել | խոտհարք | 06-084-312-007 | 1,3962 հա |
| 6 | Դավթյան | Սեյրան | կորիզավոր | 06-084-327-013 | 0,1034հա |
| 7 | Ալոյան | Մանյակ | վարելահող | 06-084-311-053 | 0,1532 հա |
| 8 | Շահնազարյան | Միշա | վարելահող | 06-084-332-006 | 0,2179 հա |
| 9 | Մխիթարյան | Աստղիկ | խոտհարք | 06-084-312-008 | 0.5417 հա |
| 10 | Հակոբյան | Հրաչիկ | խոտհարք | 06-084-314-034 | 0.809 հա |

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Կ. Սարգսյան